

մենէն խորունկ տեղը կ'աշխատէր մէկէն 'ի մէկ խանձոտեցաւ :

Ուստի անունով մէկ մըն ալ, որ փոսերուն մէկ մասը իրեն ստացուածքն էր, ուսկից ամէն օր 1000 ֆուլլարի շահունէր, ձիւթին ճայթմանը ժամանակ փոսին բերնին մօտիկ գտնուելովը 20 ոտք հեռուն նետուեցաւ . բայց կրցաւ շուտ մը ոտքի վրայ ելլել ու 10-12 ոտք դեռ հեռուն վազել . այն միջոցին քանի մը գործաւորներ զինքը առին ու մօտիկ հիւղ մը տարին : Ամբողջ զգեստները այրեր էին, ինչպէս նաև կօշիկները, մազերը, ըղունգները, աչքերը, արտևանուները, և աչքին կոպերն ալ բոլորովին աւրուած էին : Այսպիսի խեղճ վիճակի մէջ դեռ 9 ժամ ալ ապրեցաւ . նոտար մը կանչեց ու կտակը շինեց . 50,000 ֆուլլար աղքատաց թողուց և 200 ֆուլլար ալ գործաւորներէն մէկուն . բայց դեռ անունը չստորագրած մեռաւ :

Ուրիշ 6 հոգի ալ մեռան . 5 հոգւոյ մըն ալ ոսկերոտիքը դեռ կրակի մէջ են . շատերն ալ, որոնց մէջ քանի մը օտարականներ ալ կային որ եկեր էին աշխատութիւնը տեսնելու՝ բոլորովին կորսուեցան : Այնթաղութեամբ կ'ըսուի որ շատ մարդ ալ փոսուն մէջ մոխիր դարձած պիտի ըլլան : Երոնցմէ բոլորէն դուրս 30 հոգի ծանր վիրաւորեալք կը համրուին, և շատ մը ուրիշ ալ թեթև վիրաւորեալներ :

Հրդեհին ժամանակ 900-1000 ոտք հեռու տեղեր ալ կրակով բռնկեցան, և հիւղեր՝ մեքենաներ ու դեռ շատ ուրիշ բաներ այրեցան : 1200 ոտք հեռուն շոգիի կաթսայ մը ճաթեցաւ ահագին դղրդմամբ և նոյն վայրկեանին մէկէն գործաւորը մեռցուց :

Ինչոր երկինքը կրակ կտրած էր : Ապրաձիւթին հեղեղը որ 40 ոտք բարձրացեր էր՝ կրակէ շողշողուն սեան մը պէս կ'երևար, որուն վրայ բոլորքած կազը հրացայտ բոյեր կ'արձրկէր դէպ 'ի երկինք, և կարծես թէ կրակէ լեզուով ամպերը կը լափէր : Իսկ հրդեհին ժամանակ եղած գոռում գոչումը

սարսափելի փոթորկի մը, կամ անտանհերու մէջ յանկարծական սաստիկ մրրիկներու պատճառած շփոթութենու աղաղակին հետ հազիւ կը համեմատուի : Իսկ Զերմութիւնը անանկ սաստիկ էր՝ որ անկարելի էր 150 քայլէն աւելի հրդեհին մօտիկնալ՝ առանց մորթ ու զգեստ այրելու : Աշխարհքիս մէջ եղած հրարուեստական տեսարաններուն մէջ ասիկայ ամենէն ահաւորն և միանգամայն հրաշալին էր, որ բնաւ մարդ մը ինչուան հիմա չէր տեսած :

Արհրորդ օրը ուրբաթ առաւօտը դեռ ձիւթային հեղեղը կը վազէր, և վեր 'ի վերոյ հաշուով մը կրնանք ըսել որ նոյն ատեն 100 Դժէշլադէն աւելի կը վառէր :

Հանքը վրանին առնողներուն ըրած կորուստը օրուան մէջ 20-25,000 ֆուլլար կը սեպուի :

Որ և իցէ մարդկային ուժկարող չէ այս հրդեհը մարելու . և ձիւթը պիտի վառի՝ ինչուան որ աղբիւրը լմնայ : Իարձեալ անկարելի է այն ահաւոր գեղեցկութիւնը ճիշդ նկարագրել, և պատճառած անթիւ խեղճութեանցը ճիշդ գաղափար մը տալ :

Մահ ձկնորսին (Տես երես 110)

Արրիկոցցոյի հօրը՝ Սիբայելին հիւղը քաղքէն դուրս դէպ 'ի հիւսիսային կողմը կ'իյնար . լճէն տեսնուածը միայն յարդէ պզտի տանիք մըն էր՝ փայտէ խաչ մը վրան տնկած . բոլոր մէկալ մասը ծածկուած էր երկու ծեր շագանակի ծառերէ, որոնք կարծես թէ ծռած կը գրկէին զհիւղը : Իերսը խցիկ մըն էր, յատակը աղիւսի տեղ վանդակաձև տախտակամած, պատերն ալ ծխէն սևացած :

Ինկիւնը անկողին մը կար հապարակ ու խոշոր ծածկութեով գոցուած, որ խեղճ Արրիկոցցոյին էր . իսկ այն միջոցին իրեն հաւատարիմ քանգրահեր շունը պառկեր էր վրան :

Ինկոլնոյն դէպ 'ի ոտքին կողմը եր-

կա քայլ հեռու մէկ մեծ ու միաձոյլ
սնտուկ մը կար՝ հողով լեցուն, որուն
մէջը՝ ինչպէս նոյն ատեն առ հասարակ
լարոպայի սովորութիւնն էր, կրակ կը
վառէին, (վասն զի դեռ նոր գտնուած
էր վառարանը.) անոր վրայ եռոտա-
նիով կաթսայ մը դրուած էր ու կ'ե-
ռար. անկէ քիչ մը հեռու խցին ճիշդ
մէջտեղը, կաղամախէ սեղան մը դը-
րուած կար. յարդէ հիւսած չորս ա-
թող, վեց հատ թի. քամերով պատին
հաստատուած դարակ՝ մը, ուր որ
մէկ կարգի վրայ քանի մը պնակ
շարուած էին. իրեք հողէ աման, իրեք
ալ ոսկիի պէս փայլուն պղնձէ դգաւներ,
սնտուկ մը, բազմաթէն մը և ուռկան
մը բոլոր տան կահ կարասիքը կը ձեւայը-
նէին:

Պառաւ Սարթան՝ խղղուելոյն մայ-
րը, սեղանին մօտ նստած կը մանէր,
երկաթէ կանթեղի մը տակ՝ որ ճանկով
մը ձեղունէն վար երկնցած գաւազանէն
կախուած էր: Վէմբը ցամաք քան թէ
նիհար, քանի մը տեղ խորշումած.
մարմնոյն բռնուածքը շիտակ, և անդամ
ներուն շարժմունքներէն կ'իմացուէր որ
առողջ ու կայտառ բնութիւն մը ունէր,
որն ու այն խեղճ կեանքին մէջ քաշած
աշխատութիւններովն ու նեղութիւն-
ներովն ալ չէր ընկճուած: Բայց ճակա-
տը՝ որ 'ի խորոց խաղաղութե՛ն զուարթ
փայլ մը կը ցոլացնէր, անսովոր ու նոր
սրտցաւութեամբ մը մթնցած էր ան ա-
տեն. մէկը առաջին անգամուն ալ զին-
քը տեսնելով դիւրաւ կրնար իմանալ
որ այն երեսներուն դեղնութիւնը բնա-
կան չէր իրեն, և խողունները նոր
էին. կրնար գուշակել որ այն ուռած ու
արցունքով կկոցեալ աչքերը լալու վար-
ժած չէին:

Յայտնի շրթունքները կը շարժէր ու
իրեն ջերմեւանդութիւնը կը կատարէր.
Ըսուածը՝ աղօթքներուն վերջին վանկե-
րուն շնջիւնն էր միայն, որ թեթեւ սու-
լելու ձայնով մը բերնին մէջ կը մեռ-
նէին, ու եռանդեամբ ստէպ ստէպ ալ
գլուխը կը շարժէր: Բնդհատ ընդհատ

1. 88. Բ. 3.

աչքերը մօտիկ անկողնոյն վրայ կը դար-
ձնէր, ետքը դէպ 'ի երկինք կը բարձ-
րացնէր անանկ սրտաշարժ կերպով մը՝
որ յայտնի կ'ընէր իրեն ծածուկ առ
Բստուած ըրած ուխտը, այսինքն՝ թէ
արժանի ընէ Բստուած զինքն ալ քովը
կանչելու, և իրեն Բորիկոցոյին հետ
միացնելու:

Սիբայէլ ուսը սեղանին դարձուցած
կրակին մօտիկ նստեր էր. գլուխը վրան
ծռած՝ շերեփ մը ձեռքը ձիակորեակով
կաթնապուրը կը խառնէր՝ որ պուտու-
կին մէջ կ'եռար. աւելի խիստ և աւելի
դառն ցաւ մը նկարուած էր դէմքին
վրայ, որ մասամբ մը արհամարհանօք
և բարկութեամբ խառն էր: Սասնա-
ւոր դիտմամբ կռնակը դէպ 'ի Սար-
թային դարձուցեր էր, որպէս զի մօրը
ցաւը տեսնելով իրեն ցաւը աւելի չտաստ-
կանայ. և առանց գլուխը վեր առնելու
գործողութիւնը առաջ կը տանէր:

Երբոր այսպէս կէս ժամ մը անցաւ,
կինը ոտք ելաւ, գնաց անկիւնէն ըռ-
քը առաւ, դէպ 'ի կրակին մօտեցաւ և
պուտուկը վար առաւ. ետքը դարակին
քով գնաց, ու աղօթքով բոլորովին սիր-
տը վառուած՝ երեք պնակ առջևը տե-
սաւ ու նիւթապէս իրեքը մէկէն վար
առաւ, և զբաղած միտքով ամէն բան
այնպէս կատարելով՝ ինչպէս որ ձեռքը
այնչափ տարուան սովորութեամբը կը
շարժէր, իրեքն ալ սեղանին վրայ շա-
րեց, ու իւրաքանչիւրին քով մէյմէկ
դգալ ալ դրաւ, ու իրեքին մէջ ալ ա-
պուրէն պարպելով — Սիբայէլ, կան-
չեց, եկուր սեղան նստինք: — Բայց
մի և նոյն միջոցին երբ ամուսինը ձայ-
նին մօտիկ ընելով սեղանատախտակին
կը մօտիկնար՝ Սարթա անդրադար-
ձաւ որ բաժին մը աւելի դրեր էր. մէ-
կէն իրեք պնակներէն մէկն առաւ գե-
տինը դրաւ՝ ձեւացնել ուզելով իբրև
թէ շան համար լեցուցած ըլլայ. բայց
Սիբայէլ աչքէն չփախցուց Սարթայի
հոգացող ու շփոթած կերպը. տեսաւ
երրորդ դգալը որ սեղանին վրայ սովո-
րական տեղը մնացեր էր ու անդրա-
դարձաւ. գուշակեց մօրը սիրալիր մ-

ռացմունքը, սիրտը ելաւ ու երեսը ան-
գին դարձուց որպէս զի չերևնայ. իրեն
պնակը ու դգալն առաւ ու գնաց նորէն
առջի տեղը նստաւ: Սարթա գլուխը
կուրծքին վրայ ծռած վայրկեան մը կե-
ցաւ որ ինքզինքը բռնէ. վերջը յանուա-
նէ քովը կանչեց Գանգրահերը. բայց
անհկայ հագիւ գլուխը սրունքներուն
մէջէն վեր առնելով պոչը խաղցուց ու
չարժեցաւ. ուստի Սարթա անկողնոյն
մօտիկնալով, և ձեռքով ու ձայնով շոյե-
լով փայփայելով՝ առաւ վեր հանեց ու
կերակուրին քով տարաւ:

Սարթա ոչ երբեք այս շանը աղէկ
աչքով նայած ունէր. գրեթէ միշտ ա-
տեր էր, և անոր համար ալ քանի մը
անգամ որդւոյն սրդողեր էր, որովհետեւ
այն անյաջող տարիներուն մէջ աւելորդ
ծանրաբեռնութիւն մըն էր իրենց. բայց
Նրիկոյցոյի մահունէն վերջը խեղճ
կենդանւոյն խնամքէն բան մը պակաս
ընելը՝ ինչ որ որդին սովորութիւն ըրած
էր միշտ կատարելու, նախատական
խօսք մը ըսելը, թեթեւ կերպով մըն ալ
արհամարհելը, իրեն համար դառն բան
մը, յանցանք մը ու անօրէնութիւն մը
կը տեսնուէր:

Շնիկը իր նոր տիրոջը անսովոր հո-
գատարութեանը իր կերպովը շնորհա-
կալ կ'ըլլար՝ մարդու մը հեծեծելուն
նման կաղկանձելով. վերջապէս ցու-
կը պնակին մէջ խոթեց, քիչ մը լզեց
ու նորէն անկողնոյն վրայ ցատկեց, ա-
ռաջուան պէս կծկեցաւ ու հանդարտ
նստաւ: — Ես և աս խեղճ կենդանին
ալ կ'ուզէ մեռնիլ, ըսաւ ինքնիրեն պա-
ռաւը, որ աչքը միշտ վրան էր: Եստաւ,
խաչ մը հանեց երեսը ու սկսաւ ուտել.
քանի մը դգալ առաւ ապուրէն՝ քիչ մը
քիչ մը նորէն պնակին մէջ թափելով,
և կարծես թէ բերնին մէջ կը շատնայ-
ին ու չէր կրնար կլլել. բայց երբ տե-
սաւ որ Սիբայէլ կը դառնար իրեն պնա-
կը սեղանին վրայ դնելու՝ շուտով ետեւէ
ետեւ երկու իրեք դգալ կլլեց, ցուցնե-
լու համար որ ախորժով կ'ուտէ: Սիբ-
այէլ մը ետքը տեսաւ որ Սիբայէլի բերած
ու սեղանոյն վրայ դրած պուտուկը գրե-

թէ ինչուան բերան լեցուն էր դեռ.
ձեռքը առաւ ու քովը մօտենալով՝ որ
նոյնպէս կրակին քով նստեր էր, և ու-
սին զարնելով — Սիբայէլ, ըսաւ,
Եստաւ՞ սիրոյն համար ըլլայ կեր. այս
պէս ապրելով նայէ չես կրնար երկայն
դիմանալ. կրնամ ըսել որ գրեթէ բո-
լոր օրը ծով ես: — Եստաւարը բրտու-
թեամբ վեր առաւ ուսերը առանց պա-
տասխան տալու, ու Սարթա աւելի
սրտանց առաջ տարաւ իր խօսքը. —
Հայա, գոնէ քիչ մը ըլլայ կեր. կ'ու-
զես ուրեմն անսուաղութիւն ինքզինքդ
մեռցնել. ի խղճէ պարտական ես վրադ
հոգ ունենալու. ինծի համար ըլլայ. ե-
թէ զքեզ ալ կորսնցնելու ըլլամ...: —
Եստաւ աղբերահոս արցունքով խօսքը
կտրուեցաւ:

— Ե՛հ, — շուտ մը պոռաց ան ա-
տեն նաւավարը. — Երբ պիտի լննայ
աս քու լացդ. ամէն օր անդադար նոյնը.
— և ինքն ալ ձեռքին կոնակովը աչքե-
րը սրբելով — Պիտի յարութիւն առ-
նել տաս, հա՛. իմ սիրոյս համար ըլ-
լայ, որ ալ չեմ կրնար դիմանալ: —

Երբ զձողորմելի պառաւը բռնեց իրեն
արցունքը՝ որ աւելի դառն և վշտագին
սրտին վրայ ինջան. գոգնոցովը սրբեց
աչքերն ու սկսաւ մանել: Սիբայէլ մը ա-
տեն երկուքն ալ լուռ մունջ կեցան. կի-
նը առանց աշխատութենէն դադրելու
մերթ ընդ մերթ աչքը ամուսնոյն վրայ
կը դարձընէր, որն որ ցած աթուռի մը
վրայ նստած ու երկու արմուկնր ծնկե-
րուն կռթնցուցած՝ գլուխն ալ ձեռքե-
րուն մէջ առած կարծես թէ կու լար:

Սերջապէս ելաւ մօտիկ կնկանը քով
եկաւ, չորս կողմը պտրտեցաւ և կ'երե-
նար թէ բան մը կ'ուզէր ըսել որ սիր-
տը առնէ. կ'երևնար թէ՛ քիչ մը ա-
ռաջ առանց ետեւ առաջ մտածելու ը-
սած քանի մը խօսքերովը պատճառած
ցաւոյն տեղը կ'ուզէր սիրով փոխարէն
մը ընել. բայց վերջը միայն այսչափս
ըսաւ.

— Եստաւիկ, Սարթա, ուզածդ
կը կատարեմ ու զքեզ գոհ ընելու հա-
մար կ'ուտեմ. — և իրաւցնէ սկսաւ ու-

տել : — Մտիկ ըրէ, Մարթա, աւելցոց քիչ մը ետքը . — վաղը Տերվիոյ պիտի տանիմ մեր քաղքին համարաւուն . անոր վարձքովը պատարագ մը ըսել կու տանք իրեն համար, և ինչպէս ըսել կու տանք ուր որ բանադրանք չկայ : —

— Եւ արդէն պատարագ ըսել տուի իրեն համար, պատասխանեց կինը . և աչքը աղեկատին դարձնելով — կը տեսնե՞ս այս ասորը, ըսաւ, ինչպէս երիցուն է . մանուածքը պատարագին համար տալիք ողորմութեան տեղ կը բռնէ : —

Եւ անվարը շրթունքները սղմեց, որ յանկարծական սրտին զգացմունքէն կը խայթէին ու կը դողդղղային . և հազիւ հազ լալը բռնելով այնպիսի գութ մը, խանդաղատանք մը և սրտի խշխշուք մը զգաց իրեն պառաւ զուգակցին վրայ, յորում աւելի սուրբ, և կ'ուզեմ ըսել՝ աւելի քաղցր սէր մը կար, քան զայն որ երիտասարդութեան միջոց զգացեր էր :

ԹՈՎՄ. ԿՐՈՍՍԻ :

Փող :

Հատ հեղինակներ փողին գիւտը Եւրոպացւոց կը սեպեն : Եւրիպիդէս և Սոփոկլէս, և աս երկու ողբերգակ բանաստեղծներուն վրայ ծանօթութի պրոդները կ'ըսեն որ Եւրիպիդէս անուշով ետրուրացի մը եղաւ որ Հերակլիտեանց հետ այս գործիքս (Յունաց բանակին մէջ մտցուց) : Եւթէ այս վերջին լաճնիս իրաւ ըլլայ՝ Եւրոպացւոց (Յունաց հետ վաճառականութե հաղորդակցութիւնը շատ աւելի առաջ սկսած պէտք է սեպենք :

Յոյք Տրոյիոյ պատերազմին ժամանակ դեռ չէին սկսած թմբուկ գործածել . բայց Հոմերոսի ատեն ծանօթ էր, ինչպէս որ իրեն գորտոց և մկանց պատերազմին վիպասանութենէն յայտնի կ'երևնայ : Իսկ Սիդիքիոս պարտք

չսեպեց պատմական ոչինչ ճշգրտութեանց ուշադրութիւններու . այսպէս Եւրիպիդէսին մէջ հաստատապէս ապահովցնելով որ Սիդէն՝ Եւրոպայ զաւակը Տրոյիոյ պաշարման մէջն էր, կը գովէ իր հանձարը տեսակ մը փող հնարելուն համար : Եւսպիսի ժամանակագրական վրիպակները (թոյլ տուեալ են բանաւտեղծից . բայց 'ի պատմութենէ մեզի յայտնի է որ փողը (Յունաց մէջ այնչափ կանուխ մտած չէ . ստոյգ է որ շուտով մտաւ (Յունաստանի հանդիսաւոր խաղերուն մէջ և շատ յարգ ստացաւ :

Եւսպիսի 'ի պատմութենէ գիտենք որ Սքարտիագէսի Սեսենացւոց դէմ ըրած պատերազմին մէջ յանկարծական փողի աղաղակը անանկ մեծ սարսափ ձգեց (Սեսենացւոց բանակին մէջ) որ շատ չտեսնէ Եւրիպիդէսի մտած յաղթութեան, որովհետեւ մինչև այն ատեն անծանօթ էր փողը այն կողմի ազգերուն :

(Յունաց հեղինակները իրենց ազգային փողերուն վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չեն տար . բայց Հոմերոսեցւոց այլ և այլ տեսակ փողերուն վրայ քանի մը գիտելիք կան : Եւսպիսի իրենք իրեք տեսակ փող ունէին : Եւսպիսի տեսակը խողովակի նման ըլլալուն համար քող կ'անուանէին . ասիկայ ուղիղ էր և բերնի կողմերը նեղ, և անզգալի կերպով կը լայննար ու կ'որ ձևով կը վերջանար : Եւրիպիդէս տեսակը առջինէն պզտիկ էր և ծայրը գալարուած, ուստի և Գալարաքող կ'ըսուէր : Եւրիպիդէս տեսակին յետոյ կ'ըսէին՝ որ գրեթէ բոլորովին շրջանակաձև էր :

Սիդիքիոս քիչ զինուորները 'ի պատերազմ սրտասնդելու կը գործածուէր, կամ իւրաքանչիւրը իրեն դրօշակին տակ ամփոփելու, երբոր սաստիկ խառնուելով ցրուած կ'ըլլային : Սիդիքի փողը բանակի մէջ մասնաւոր հետեւակազօրու համար որոշեալ էր, և հնչողներն ալ հետեւակ էին . բայց եթէ կարգէ զուրս դիպուած մը եթէ ստիպէր՝ ձիու վրայ ալ կրնային հեծնել : Եւրիպիդէս բանակ առ բանակ կը ճակատէին՝ զարնուիլ